

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35^{րդ} ՏԱՐԻ

1886 ԴԵԿՏԵՄԲԵՐ 27

ԹԻԻ 3854

“ՄԱՍԻՍ” շաբաթաթերթի այս թիւն ներկայ տարւոյս վերջինն է : 1887ի առաջին թիւը պիտի հրատարակուի յունուար 10ին , նոր խմբագրութեամբ , եւ հիմնովին նոր կարգադրութեամբ՝ որը պիտի ծանուցուին :

ԼՈՍԱՆՆԵՐՈ ՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխատութեան բաժանումն , ինչպէս ամէն արուեստագործութեան , նմանապէս լրագրութեան համար անխուսափելի օրէնք մը եղած ըլլալով , թերթ մը , օրինակի համար Մասիս , մինչեւ որ ընթերցողին հասնի իւր կատարեալ ձեւին մէջ , պէտք է բաղմնաթիւ գործաւորներու ձեռքէն անցնի : Խմբագիրներն չեն վերաբերիր թերթն իւր արտաքին ձեւին մէջ դնող գործաւորաց դասուն , թէն գիտենք որ թերթին հոգին

են անոնք , բայց իրենց գաղափարներուն մարմին տուող գործաւորները գրաշարներն են . Կոթմալէրի իրաւունք պիտի ունենայ յաւիտենական օրհնութիւններու . բայց ո՞վ կրնայ երբէք համակրութեան տուրքը զլանալ գրաշարներուն . ասոնք նոյն բանը կ'ընեն մտաւորական , իմացական աշխարհի գաղտնիքն վրայ ինչ որ սերմանացանին կը կը վիճակի ընել հողային գաղտնիքն վրայ . ցօրենք անուններուն պատուականագոյնը կ'ըլլայ , եւ առներն իմացական անունդի մը չօջափելի տարերքը կը կազմեն . բայց մինչդեռ մշակին թոքերն ազատ օդ կը շնչեն , մարմինը կը կազդուրի եւ բրտունքը կը վարձատրին , հոս գրաշարին աչքին լոյսը կ'ըսպառի , կը նուազի ամէն օր , անընթացեւ ձեռագրերու անհամար եւ ամենազան տառերու եւ թուանշաններու առջեւ , զորս կը ժողովէ փեթակներուն մէջէն , կը գետնեղէ արագաբար արմկաձեւ բարձր տիկին մէջ . սողերը կը կազմուին եւ յետոյ լուծման պահուն անոր ձեռքը կը տեղացունէ կը ցանէ մէն մի տառ , կէտ ու նիշ իւր յատուկ փեթակի մէջ . առանց գրաշարներուն մամուլը պիտի մնար ամուլ , հետեւապէս քաղաքուիրթութիւնն անձանօթ . եւ այս այնքան ստոյգ է ըստ մեզ որ լուսաւորութեան այդ բազմերախտ աշխատաւորներուն գնահատելով բոլոր կարեւորութիւնը , Վեհափառ կայսրն մեր Սուլթան Համիտ Բ . տալահարկ հաշակեց այս տարի գրաշարները . թանկագին յանձնարարական որ հայ գրաշարներու ապագային վրայ կը հրաւիրէ Հայ ազգին ուշը :

* *

Աշխատութեան բաժանումը ըսինք : բայց հետեւինք անոնց որ եւրոպական ու անգլո-ամերիկեան հսկայ լրագիրներուն պատրաստութեան կ'երթան ականատես ըլլալ : Քանի մը ժամուան մէջ քանի մը հարիւր հազար թերթ պատրաստող խմբագրատուն մը տիտանեան գործ մը չէ՞ որ կը կատարէ ամէն օր : այն ի՛նչ ընդարձակ եւ անընդհատ գործունէութիւն , որքան գործաւորներ , ի՛նչ բազմաթիւ արուստագործութիւն : խմբագիրներ , թարգմանիչներ , թղթակիցներ ամէն բազմ , հեռագրական մասնաւոր գործակալութիւններ՝ իրոք թէ հերիք չ'ըլլային Վայդերի եւ Համփրի հզօր գործակալութիւնը : Մամլոյ Շարայները պէտք է կշտացնել , եւ անոնց սնունդը կը պատրաստուի չէ թէ միայն խմբագրատան մէջ , այլ անկէ դուրս ամէն տեղ , պաշտոնները , պաշտօնատները , զինեալներու մէջ : Բանքերներու բանակներ սիրուած են ամէն կողմ , ոստիկանատուն , պանդոկները , քաջատնիկի եւ մեծ տնտես հիւանդներու դահլերը , ձիարշաւարանն , արքայամարտին առջեւ , կնուսինարաններու քովերը : Խողով մէկ բէնիկնոց գրագէտը կը տեղայ ամէն տեղ : Էւ դիտելի է որ լրագիրներու տեղական գոյնը , լուրերու թարմութիւնը պահողը բանբերներն են որք իրենց ժողովրդականութեան եւ ճարտիկութեան համեմատ , իշխանի , մինչեւ իսկ թագաւորի տիտղոսով կը պատուին : Այսպէս էր Ճ . Սմիթ ամերիկացին : Պէյքըր զօրավարին մեռած օրը խուռն բազմութիւն լցուած էր տանը մէջ ու առջեւ : Սմիթ , իրեւ բանբեր Նի-Ե-Երա-Զերա-Լի , կ'ուզէ ներս մտնել : Ոստիկանութիւնն զշարելով կ'արգելու զնա :

— Պիտի մտնեմ :

— Չը պիտի մտնես :

Սմիթ անյայտ կ'ըլլայ :

Հոգեհանգստեան աղօթքները կը լսեն : Տաներէցը սեղանին կը մօտենայ , փեղդոյրին մէջ բան մը կը փնտռէ , չը գտնէր , զըմկամակ՝ հակիրճ դամբանական մը կ'արտասանէ եւ արարողութիւնը կ'աւարտի :

Սմիթ տան երդիքն ելած էր եւ ծխնելուդին մէջէն սոգոսկելով յաջողէր էր իջնել բազմութեան մէջ խառնուել : Նի-Ե-Երա-

Զերա-Լի նոյն օր դամբանական ճառ մը կը պարունակէր Պէյքըր զօրավարին վրայ : ճառ մը որ գրուած էր այլ ոչ արտասանուած , զի տաներէցը չէր գտեր իւր փեղդոյրին մէջ : Ճ . Սմիթ թոռուցեր էր զայն : Ահաւարիկ ի՛նչպէս կ'ըլլայ Բանքերներու Խաբարը :

Այսքան ճարտիկ պաշտօնեայներ իրենց արամադրութեան ներքեւ ունեցող անգլո-ամերիկեան լրագիրները բաւական դո՛ւ չ'ըլլալով սակայն լուրերու ուրոյն փոխանցութենէն , մտածած են Բէլթֆօններ հաստատել խմբագրատան եւ այլ և այլ կէտերու միջեւ : Թայֆի տպարանէն մինչեւ Անգլիական Խորհրդարանը կը ձգուին Խտիսնի մեքենային թելերն եւ այդպէս գրաչարները բանբերին հետ ուղղակի կը հաղորդակցին : Ժամանակ չահելու համար ամէն միջոց կը հնարուի : 1870ին մեքենայ մը գետեղուեցաւ հոն որուն զլխաւոր արդիւններէն մին սա եղաւ որ մէկ ժամու մէջ 100 տող կրնար շարուիլ անով , մինչդեռ գրաչարն բայց խիստ քննութենէ մը անցնող գրաչարը հազիւ յիսուն տող շարել կը յաջողէր , 2,240 տառ :

Գրաչար մեքենայ . միթէ հրաշալիք մը չէ՞ր այս ալ : Ատեն տտեն քանքեր եղած էին որ գիր շարելու դժուր մարդէն առնուի մեքենային յանձնուի : Լիօնցի գրաչար մը հնարեց նախ այդպիսի մեքենայ մը , բայց չը յաջողեցաւ : 1844ին Բէլթֆօն մը տեսնուեցաւ , այս ալ անչափ մեքենայ , որ մէկ կողմ նետուեցաւ քանդի ո՛չ գրամի եւ ո՛չ ժամանակի խնայողութիւն չէր ըլլար անով : Միայն Թայֆի փորձերն յաջողութեամբ սկսակուեցան : այսու ամենայնիւ գրաչար մեքենան չ'արգիլէր որ երկու հարիւրի չափ գրաչարներ աշխատին ամէն օր տպարանին մէջ :

1814էն ի վեր մեքենայը չատ կատարելագործուած են . նախնական մամուլները հազիւ 2-3 հարիւր թերթ կը սպէին մի ժամու մէջ , այն ալ մեծ ճգամբ եւ յոգնութեամբ : Կրկինը ստանալու համար պէտք էր 3-4 տախտակ աւելի շահիլ . մեծ լրագրոց մամուլները բազմաթիւ չէնքերու նըման բաներ էին . մէն մի մեքենայի քով ութ մարդ կանգնած թերթերը մի առ մի կ'ստանային մեքենային բերնէ : Այսօր ա-

մէն բան փոխուած է . Բեկաբայի տպարանը այցող մը գոհարներու կը նմանցունէր տեսած մեքենայները . սոսնց գործածութիւնը այնքան զիւրիւն է, կ'ըսէր, որքան նորագութիւնը՝ ի հարկին . Հին Մասիս-Շիններուն տեղ այժմ սոսնց դրուած են . եւ երբեք գործաւոր կը բաւէ ամէն միայն . Գործուորները մեքենային շարժումը դիտելէ ուրիշ ընելիք չ'ունին . թերթերը մի առ մի դարձունելու հարկ չը կայ . 4-5 հազարամեթր երկայնութեամբ թղթեր կը կտրուին, կը տալուին եւ աւանց մարդու օգնութեան կը համարին : 8 զլիշէ աւելի մէն մի մեքենայ, որով 16 էջ կը տպուի մէկ շարժմամբ, այսինքն ամբողջ չորս լրագիր, կամ թէ մի ժամու մէջ 8,000 ամբողջ թերթ, ըսել է 150 թերթէ աւելի մէկ րոպէի մէջ . եւ անցնելով յաջորդաբար երկու ուրիշ գլխաններէ, կը կտրուին զատ զատ : Մեքենայէն ելնելու պահուն թերթերը հարիւրական օրինակ համարուած կ'անցնին գործաւորներու ձեռքն որք նոյն կ'ստուգեն թիւերն, եւ այնուհետեւ վերելալի մը միջոցաւ ուրիշ յարկի մը մէջ կը փոխադրուին ուր վաթսունէն աւելի կանայք բաժանորդներու յղուելիք Բեկաբայները կը ծալեն, կը ծրարեն ու գօտիի ներքեւ անցունելով կը յանձնեն ուրիշ գործաւորներու որոց պաշտօնն է ծրարները ձեռքէ եւ դերձանով կապել հեռաւոր երկիրներ յղելու համար :

Այս ծրարները կառքերով կը փոխադրուին մինչեւ չոգեկառաց կայարանները . Փարիզի բաժանորդներուն ցրուելու գործը վաթսուն ցրուիչներու յանձնուած է որոց իւրաքանչիւրն մի չրջանակ ունի . առաւօտը ժամը չորսէն (ըստ եւրոպ.) կ'սկսին հեռաւոր թաղերէն եւ կը հասնին մինչեւ կեդրոնին թաղերը . առաւօտուն բաժանորդը չ'արթնցած լրագիրը յանձնուած է դռնապանին . Բեկաբայի փոխադրութեան, ցրման եւ գործերուն համար ամէն օր երեք հարիւր մարդ կ'աշխատին : Տպագրութեան գործը կէս գիշերէ սկսած է . առաւօտուն ժամը չորսին թղթատարը կը մեկնին . հինգին ըրադրաւաճառը կը խռնին : Խոնջպէս ընելու է Բեկաբայի եւ Բեքէ Ժոնալի նման լրագիրներու հարիւր հազարաւոր օրինակները պատրաստելու համար միեւնոյն տառն : Ա-

հա կ'ընծիւր . բանդի ի՞նչ բանի կը ծառայէ այնքան աշխատութիւն եւ ծախք եթէ երկաթ ուղիք մեկնին եւ պէտք եղած ժամանակին չը ցրուին լրագիրները : Արագատիպ մեքենայներն անշուշտ լուծած են այդ կընճարը, սակայն՝ ամէն մեքենայի մէկ տախտակ պէտք է մինչդեռ հազիւ տախտակ մը միայն շարուած է : Բարեբաղդաբար այդ շարուած տախտակը սահանուած է մայր ըլլալու ուրիշ կարծր կաղապարներու, խէններու, որով հարկ չը մնար տախտակներու եւ գրաշարներու բազմապատկութեան : Տառերն ի՞նչպէս պիտի վերածուին գլխէներու այդ արգիւնքն ստանալու համար զանազան արհեստներ կը միջամտեն . արագ եւ անվրէպ գործողութիւն մ'է սա որ ամէն օր կը կրկնուի . այլ գործաւորին, արհեստաւորին համար էջը մ'է այդ ի սանդարտմեաւ արիւն քրտինք մը տած են . կիսամերկ մարդիկ Պուտոնի, ըստուերներու նման զինուած երեք ձանիններով, հրատի մը ոտքէ կը շարժին . հոն կը պատրաստուի մետաղեայ լուսան օր պիտի ըցուի յետոյ զլանածեւ կաղապարներու մէջ, ուր զետեղած են նախատիպ տախտակին թանձրամած խմբը, որուն մէջ զրօշմեալ տառերու մաքուր ձեւերը պիտի քանդակուին զլիշէներուն վրայ, եւ սոսնց պիտի տպեն յետոյ լրագիրը արագաշարժ մոմաւններու մէջ զետեղեալ :

Հետաքրքրիչ անսարան զոր արեւելցիք, գէթ Պոլսեցիք օր մը կրնան ունենալ իրենց աչքին առջեւ եթէ Եւրոպայէն ու Ամերիկայէն ի Վոսփոր փոխադրուի մոմայ տենդոտ գործունէութիւնը : Առ այժմ մեր ամբողջ լրագիրներուն մէկ տարուան ամբողջ թերթերը հազիւ Բեքէ Ժոնալի նման լրագրի մը շաբաթական թերթերու թուոյն կը հաւասարին :

Չը գիտենք թէ որքան այս հաշիւը կը մօտենայ ճշդ ութեան, այլ 1291 մարտ ամսէն ի վեր լրագիրները զրօշմի ենթարկուած են . մէն մի թերթ երկու փարայի տուրք մը կը վճարէ . առաջին տարիներն այս տուրքէն կը դոյանար վեց հազար ոսկի, ծանուցումներէ դուրսցած հասոյթը միատեղ . մի միայն լրագրի համար վճարուած գումարը ենթադրուելով որ ըլլայ չորս հազար

ոսկի, հարկ է որ տարին ութ միլիոն թերթ տպագրուի: Թուրքիոյ մէջ հրատարակուած ամբողջ լրագիրներու թիւը հարիւրէն քանի մը հաս աւելի է, բայց դուրս ձգելով մի քանի հանդէսներն, այս թիւը կը նշանակենք իբրեւ պաշտօնական և բաժնեկով ութ միլիոնը հարիւր հինգի վրայ կը գտնենք որ մէն մի լրագիր տարին միջին հաշով կը տպուի ութսուն հազար օրինակ. — ամիսը չուրջ 6,700 եւ օրը չուրջ 237: Դարձեալ բաժնեկով հարիւր լրագիրն երեսուն միլիոն ժողովրդեան մէջ, կը տեսնենք որ երեք հարիւր հազար մարդու կ'իյնայ մի լրագիր. եւ այս վեր ի վերոյ պարզ հաշիւներէն կ'երևի որ Թուրքիոյ լրագրութիւնը լաւագոյն պայմաններու մէջ կ'գտնուի չը զարգանալու համար. օրինական խտութիւնք, ուսմանց եւ կրթութեան ոչ ընդհանրացումը, ժողովրդեան մէջ առ հասարակ տիրող միօրինակ անընթերցասիրութիւնը, ներքին եւ արտաքին յարաբերութեանց, դժբաղնութեանց եւ հաղորդակցութեանց պակասութիւնը, դժուարութիւններն եւ հետեւապէս երկրին ու ժողովրդեան աղքատութիւնը պատճառ կուտան ըսելու որ կըրթութիւնը կամ մտաւորական շարժումը ոչինչ է. եթէ չէ օչինչ, դոնէ խիստ աննշան է ի մեզ:

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

1870Ի ՀԱՅԵՐՆ Ի ՌՈՒՍԻԱ

Ն. ԳՈՒԹԵՐՈՎԻՆ

Բ.

Հայոց բնակարաններ, նոցա սնունդն եւ բնաւորութիւնն. — Արանց եւ կանանց զգեստները. — Նկարագիր կանանց:

Այս գրութիւն չ'ունի նպատակ ուսումնասիրելու Հայոց բազմադան կենցաղավա-

րութիւնն, այլ միայն կը բաւականանայ կաւկասիոյ Հայոց համառօտ նկարագրով:

Այս առթիւ պէտք է ըսել որ «Հայկական երկիրն» բաւական բազմացած է Պարսկաստանի եւ Թուրքիոյ Հայ եկեղեցիներով որ դաշխած են Ռուսիա այլ եւ այլ ժամանակ, եւ մանաւանդ պատերազմէն յետոյ, այսինքն 1827 ին եւ 1829 ին: Արնչեւ այն ժամանակ նոքա կ'ապրէին խառն Թաթարներու հետ. եւ նոցա թիւի յարաբերութիւնն, վերջնոց հետ, գրեթէ նոյնն էր, ինչ որ միւս մահմետական գաւառներու մէջ:

Թաթարներու մէջ բնակած Հայերն, տնկարելի է մի եւ նոյն դասակարգութեան ենթարկել իրենց այն ցեղակիցներու հետ, որ կը կազմեն զարգացեալ դաս մը, ցրուած աշխարհիս ամեն մասերն, և մինչեւ անգամ նոցա հետ, որ կը բնակէին Վրաստանի քաղաքներու մէջ: Իսլամաբնակ գաւառներու Հայերն, բացի կրօնէն, իրենց կենցաղավարութեամբ շատ քիչ կը զանազանուէին Թաթարներէն: Փոսերու կոյտեր, ծածկուած հոգով, ձգուած աստ և անդ առանց կարգ ու կանոնի, և բաժնուած իրար միջեւ աղբի դէպքով, կամ դարչահոտ ու աղտեղի ջրակոյտերով. նեղ ճանապարհներ որ ծուռումուռ կը դառնան վարէն կամ այդ փոսերու տանեաց վրայէն. — այս ամենը կը կազմէին Հայկական աւաններու ընդհանուր տեսքն, մեծ մասամբ: Միայն մի քանի տեղեր, ստորին դօտիի մէջ, այգիներն ու անտառակներ, իրենց կանաչութեամբ կը ծածկէին այն տգեղութիւնն և աղտեղիութիւնն, որոց մէջ ընկղմած էին այդ դիւղերն: Հայերն ևս Թաթարներու նման կը բնակէին ստորերկրեայ խրճիթներու մէջ իրենց անասուններու հետ միասին, առանց երբեք խորշելու կամ ձանձրոյթ զգալու այդ կենդանեաց սովորութենէն և կենակցութենէն: Այդ պիտի ստորերկրեայ տուններն Հայ գիւղացիի համար թէ՛ բնակարան էին թէ՛ ննջարան, թէ՛ գոմ էին ու մուր նորա անասուններու համար և թէ՛ կրթութեան վայր՝ նորա սերունդի համար: Այդ տեղ կը թառախէին հաւերն ու աքաղաղներն, որ, բնակարար, խիստ անհաճոյ ընկերութիւն մը

եղած լինելու էին զիշեր ժամանակ, իրենց կուռնոցներով և կուռնակներով: Բիւրաւոր բազմազան և գարշ միջատներ կը դիմաորեն այցելուին խրճիթի մուտքի առաջ:

Հայի ընտանիքն և նոյն իսկ ինքն կը գոհանային մի արցակ կանաչեղէնով, մի բուռն լուրիայով և մի պատառ քարթու հացով, և այս ոչ թէ աղքատութեան պատճառաւ, այլ որովհետեւ սովորութիւնն այդպէս էր. նոցա ճոխ կերակուրն էր փիլաւ, խորոված, կանաչեղէն:

Ենթակայ գտնուելով զանազան Տէրութեանց հպատակութեան, և ցրուած լինելով, կարելի է ըսել, համայն երկրագունդի վրայ, և այս պատճառաւ ենթակայ լինելով տարբեր կլիմաներու, տարբեր կենցաղավարութեան և զբաղման, Հայ ժողովուրդն կորուսած է իւր ազգային նկարագիրն, առանձնայատկութիւնը: Միջին հասակ, ամրակազմ մարմին, հուժկու իրան, հաստիկ վիզ, ջլուտ ձեռներ, խիստ գիմազներով թուխ երեսներ, վառվռուն աչքեր, արծուի կոշ ըրիթ, սեւ մազեր, լըստիկ չուրթեր, գեղեցիկ, սպիտակ այլ ցանցառ ատամներ— ահա՛ Հայոց յայտարար նշանները: Հայ հասարակութեան այն մասն որ կը վարէր նստական կեանք եւ կը սընանէր առաւելապէս բրինձով, ծերութեան միջոցին կը ծանրանար այսինքն կը գիրնար:

Հայերը խորամանկ են եւ հասկացող առ հասարակ. նոքա մեծ սիրով կը հետեւին կրթական գործին. արուեստի եւ վաճառականութեան մէջ չ'ունին իրենց հաւասար մրցակիցներ: Հայերն համբերատար են եւ հաշուապէտ, նոքա չափաւոր են և լաւապէս կարող են նախատեսել թէ որ ձեռնարկն շահաւէտ է եւ որն՝ ոչ:

Վրաստանի Հայերն, որ կը կազմեն քաղաքային ազգարնակութեանց մեծագոյն մասը, իրենց գործունէութեան նկարագրով կը պատկանին միայն առեւտրական դասին, որ կը ձգտի միակ նստատակի մը — իւր շահասիրութեան գոհացում տալուն: Ղրամի տենչն եւ հարստութեան իղձն կը սնուցանեն Հայոց մէջ խորամանկութիւն, նենգամտութիւն, այնպէս որ նոքա զարմանալի

յաջողութեամբ կը յարմարին հանգամանքներուն երբ պէտք է խաբել, ծառայել, յանձնարարութիւն փնտռել եւ ջերմապէս կատարել զայնս, բնականաբար եթէ միայն շահ կայ:

Հայուհիներու սեւորակ մազերն, վառվռուն եւ թուխ-թուխ աչքերն իրենց արտեւանունքներով եւ յոնքերով հրապուրիչ եւ սիրձեն արտայութիւն մը կ'ընծայեն նոցա դէմքին: Սակայն հազուադէպ է այս, եւ նոքա եւս, որ ունին այսպիսի հրապուրիչ արտայայտութիւն, ունին առաւելապէս ծաղկահաս հասակի մէջ: Հայ կանայք ծոյլ են եւ դանդաղ, անճարալի են քալուածքի մէջ, յաճախ ունին ծուռ ոտներ, որ մասամբ յառաջ կուգայ ասիական սովորութիւններէ, ծաղապատիկ նստելէն, եւ մասամբ փոքրիկ մանկանց ոտներն ամրաֆէս փաթթելէն լաթերու մէջ:

Կանայք մեղք կը համարին ծիծաղիլ եւ կատակել օտարի հետ, նոքա կը կրեն քողեր իրենց դէմքի վրայ, երբէք չեն վերցըներ զայնս, եւ մինչեւ անգամ կը քնանան գլուխը փաթթած, այնպէս որ լոկ աչքերը միայն կը տեսնուին:

Կանանց ամօթխածութեան գաղափարն այնպէս խորաթափանց արմատ ձգած է Հայոց մէջ, որ կինը ոտէն ցլուխ կը փաթթուի սպիտակ սաւանով «այնպէս կնոջ թոքերն անկարող դառնալով շնչելու թարմ օդ, կ'արտաշնչեն ծծմբային-ջրածնի հոտ»:

«Եթէ երկու ամուսնացեալ եղբայրներ կը բնակին մի եւ նոյն տան մէջ, կը տեսնես որ, մէկ եղբոր կինն իւր կեանքի բոլոր ընթացքին մէջ եւ ոչ իսկ բառ մը կը խօսի իւր ամուսնի եղբոր հետ: Եւ այս պարագայն «ամուսնական հաւատարմութիւն» կ'անուանի այս տեղը:»*)

Հայուհիները չափազանց կը սիրեն ճոխ զարդեր, մետաքսեայ երկնագեղ կտաններ արծաթաթել և որկեծամուկ, գունաւոր դոհարներ և ֆաշիփրեան չալեր և այլ գոյնզգոյն չալերով: Նոցա գլխի զարդն է մետաքսայ

*) «Գանձակի նահանգի վրայ» տես «Ալաւկաղ» լրագրի 1865ի 44 թիւն. «1854ի Հայերն» նոյն թիւ 83. «Երեւանեան նահանգի ցեղերուն նկարագիր» նոյն 1860ի 69 թիւի մէջ:

Թաշկինակ և ճաշակով պատրաստուած գունաւոր երիզներ, իսկ մի քանի տեղեր, օրինակ Նոր-Բայազիտի գաւառի մէջ, աղջիկներն ցամուսնութիւն կը կրեն Բաւաւիճի եւ լաւի, ամրացած առաջինին գնտաօտով եւ ուսերու ետին քամակը ձգած: Թաւասկրտվէն վար, ճակատի շուրջը կապուած կայ մի թել, որի մէջ անցուած են ոսկի կամ արծաթ դրամներ: Իսկ երբեմն եւս այսպիսի շաւիղներ անցուած կը լինին ողջնակն երկայն ծամերու հիւսքի մէջ, որ կը ձգուին ուսերու վրայ: Այսպիսի շարոց կը գործածեն եւ ամուսնացած կանայք, կրելով զայն իբր մանեակ: Ամուսնացեալ կանանց եւ աղջկանց սովորական զգեստն նման է պարեգօտի որ կը պատրաստուի բամբակեայ կարմրագոյն պատտառէ եւ կը հագնուի չապիկի վրայ: պարեգօտը չի կոծկուիր եւ նորա տակէն կ'երեւի կարմրագոյն մետաքսէ եւ բամբակեայ կտաւէ վարտիքը:

Ի Շուշի կանանց հին սերունդն, բաղաբի աղքատ դասն եւ գեղջիկները կը հագնին բաւական այլանդակ կերպիւ: Նոցա զուլսը փաթաթուած է բազմաթիւ լաւաշներով, իսկ վերեւէն ձգուած է կարմրագոյն մետաքսէ մեծ թաշկինակ մը — շաւիղ, որի ծայրին կ'ամրացուի արծաթ կտաւ ոսկի շղթայ մը: Այս շղթայով կը պահուի գլուխը բոլոր ծանր փաթաթը: Փաթաթի տակէն կը տեսնուին հոյանտական ոսկիներու մի կամ մի քանի շարոցներ: Վերեւէն Շուշեցի Հայուհին կը հագնի Բաւաւիճի (չրջագգեստ) կարծ թեւերով և երկու ձեղքուածով, բացուած ետեւէն, սկսեալ մէջքէն մինչեւ վար: մանկամարդ կանանց ծրնօտն ու բերանը ծածկուած կը լինին սպիտակ թաշկինակով: Իսկ պառաւ եւ սգակիր կանանցն կարմիր թաշկինակով: Մին թանայի տակէն նոքա կը հագնին լայն ու երկայն չապիկ մը ալիք որ մետաքսեայ հիւսուածք մ'է, առաւելապէս կարմիր եւ տեղական արտադրութիւն:

Բաւական լայն գօտի կը պատէ կնոջ իրանն մինթանայի վրայէն: Իսկ փողոց ելած ժամանակ Հայուհիներն իրենց վրայ կը ձգեն սպիտակ շաւիղ մը, սաւան, որ կը ծածկէ ամեն ինչ, աչքերէն եւ ոտներէն զատ:

Այժմ Հայուհիներու ծաղկահաս սերունդն, բէգերու, մելիքներու եւ վաճառականներու դասին վերաբերող, կ'սկսի գործածել վրացական տարազ, զոր արդէն ի վաղուց հետէ կը գործածեն իշխան Մատաթովի Չինախչին կալուածի բոլոր կանայք:

Պանծակ դաստի գեղջուկ Հայ կանայք կը հագնին երկայն չապիկ, կարմիր կտաւէ, իսկ բաւական կարողութիւն ունեցողներն՝ մալէ վարտիքներ, որ կ'երեւին չապիկի տակէն վարէն շուրջանակի ասղնեգօրծ: Վերին զգեստն է Բաւաւիճի որ կը շինուի հասարակ մետաքսեայ պատտառէ և երբեմն գեղադարձուած է արծաթի մանր դրամներով: Գլուխին կը հագնին լաւճի պէս բան քօղով միասին: Ամուսնացեալ կանայք իրենց երեսին վարի մասը կը ծածկեն սովորակ մի տեսակ կապոցով զոր կ'անուանեն Բաւաւիճի աղջիկները չեն գործածեր զայն: սոքա կը հիւսեն իրենց մազերը: Պանծակի Հայերը կը հագնին խիստ կոշտ կոպիտ, եւ բաղմատեսակ, այս պատճառաւ նոցա տարազն տղեղ է եւ զարկ ամեն վայելչութենէ:

Կանայք իրենց բոլոր կեանքը կ'անցունեն տնային խնամատարութեան և մանկանց դաստիարակութեան մէջ: Նոքա առանց դուրս ելնելու կը մնան իրենց տան մէջ և կը վարեն միայնակեաց կեանք մը:

Հայոց ընտանեկան կեանքն կարի պատկառազկեցիկ է և ունի նահապետական նկարագիր: Հայերը, բազմաթիւ մարդոց կարծիքով, կը պատկանին ամենախաղաղ ազգերու դասին: նոցա յանցանքն է միայն հետեւանք պաշտպանութեան և բռնութեան ընդդիմադրութեան, բռնութեան ուժ յաճախ ենթարկուած է հայ ազգը:

Բայրըն կը հաւաստէ, թէ դժուարաւ կարելի է գտնել Հայոց պէս սերիշ ազգ մը ուժ ժամանակագիրները վերագրած ինին այնքան քիչ յանցանքներ, որքան Հայոց: Հայերը կը պատկանին գործօն մարդոց թւոյն: Նոքա մեծ սէր ունին դէպի վաճառականութիւն և սեղանաւորութիւն: Կաւիասիոյ բոլոր վաճառականութիւնը կը գլուխուի Հայոց ձեռքն: Ի Թուրքիա պետական եկամուտներու հաւաքումը Հայոց ձեռքն է:

դրամի շնորհիւ նորա ունին բաւական նը-
շանաւոր ազդեցութիւն թրքական և պարս-
կական տէրութեանց գործող վրայ : Հայերը
չահաւոր են ևս իրենց ամբողջ կեանքը կը
գործածեն առաւելապէս շահ հայթայթելու
համար , թէ կ'ուզէ շահն լինի աննշան :

Ընտանեկան կեանքի մէջ ժլտութիւն է հետ
եւ դեռ եւս աւելի ժլտութիւն է ուրիշի հետ
անձնական յարաբերութեանց մէջ : Հայէն
այն ժամանակ միայն կարելի է դրամ փոխ
առնուլ երբ կարող լինիս մեծ տոկոս հա-
տուցանել եւ երբ նա հաւատացած լինի
կատարելապէս եւ ապահովուած թէ դու
հարկ եղած միջոցին կարող ես հարկաւա-
րատիկ վճարել : Հայ ժողովրդեան ազգա-
յին նկարագրի այս տխուր ու նոսմացու-
ցիչ կէտը գէթ փոքր ինչ ներելի կը դառ-
նայ այնու որ այս թուականի այսինքն 1870ի
Հայերը նախատուութիւններ կը մատու-
ցանեն ազգային բարեգործական եւ կրօ-
նական հաստատութեանց և հանրային գոր-
ծոց համար :

Պ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅԿԱՊԵՏԱՆԻ ԿԱՐԴԻՆԱԼՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՎԱՐԴԱԳՈՅՆ ԳԼԽԱՐԿՈՎ ԱՂՁԻԿԸ

(Շար. նախորդ թուէն և վերջ)

— Այժմ, եկուր քովս նստէ եւ լրջօրէն
խօսինք . բայց նախ եւ առաջ թաշկինակդ
տուր , որպէս զի քրտնաթոր ճակատդ սըր-
բեմ : Խեղճ տղայ , կենաց պայքարներուն
մէջ դեռ չես մտած : Տեսէ՞ք այդ սիրուն
աչքերդ որչափ կարմրեր են : Լացեր ես և
մաղերդ քունքերդ փակեր են , բազմի-
քէն ելածի նման : Սիրուն հրեշտակ , մի
դողար այդպէս , միթէ մեր երջանկութիւնը
պաշտպանելու համար քովդ եկած չե՞մ ես ,
յաւելցոց պաշտպանութեան ձայնով՝ գըլ-
խարկը գլուխը գնելով՝ զոր հանած էր , որ-
պէս զի Ավրան գինքն աւելի լաւ համարու-

րէ : Այժմ, դղեակ վերադարձիր և մեկնե-
լու պատրաստուէ :

— Ինչո՞ւ համար , ըսաւ Ավրան , զար-
մացմամբ , կամրադեղ աղջկան նայելով :

— Ինչո՞ւ համար : Տղայ ես , չը հասկը-
ցար թէ՞ պարոն կոմսին ըրած յիմար խոս-
տովանութիւններէդ վերջը նա զմեզ լրտե-
սել պիտի տայ :

— Շատ կարելի է :

— Եւ եթէ մեզ միատեղ գտնեն՝ քեզ
սենեակդ բանտարկել պիտի տայ :

— Հաւանական է :

— Այն ատեն ալ զիրար չենք կրնար
տեսնել :

— Աստուած իմ :

— Եւ այն ատեն քու վարդապոյն գըլ-
խարկով սիրուհիդ վաճէն պիտի մեռնի
հեռի իւր սիրեցեալ Ավրանէն :

— Յիսուս Մարիամ :

— Հանդարտէ , ըսաւ , բարձրաձայն
խնդալով , ամեն բանի դարմանը գտած եմ :
Այս երեկոյ , ես զքեզ կ'առեւանգեմ , այ-
սինքն դու դիս կ'առեւանգեմ , եւ միասին
Փարիզ կը մեկնինք : Հոն գլխութեամբ ըս-
տակ կրնանք գտնել վաշխառուներէ , այն
բարի մարդիկներէն՝ որոնց վրայօք շատ գէշ
բաներ կը խօսինք երբ անգամ մը ստակ-
նին առնենք . բոլոր այդ բաներուն կերպը
գիտեմ ես : Մուրհակներ կ'ստորագրես տա-
րիէ մը վճարելի : Օն , խենդ տղայ , մի-
թարուէ եւ ժպտէ ինձ , որպէս զի տեսնեմ
իմ գեղեցիկ սեւ կովուս կաթին նման ճեր-
մակ ակաւայներդ :

— Բայց , տարիէ մը ի՞նչպէս պիտի վը-
ճարեմ :

— Ամեն բան ըսե՞լ պէտք է քեզ : Մի-
թէ վեց ամսէն չափահաս չը՞ պիտի ըլլաս :

— Այո՛ :

— Լաւ , քու հողերուդ մէկ մասը կը ծա-
խես :

— Անոնք հօրս են :

— Կամ գեղեցիկ ագարակներդ :

— Անոնք ալ հօրս են :

— Ընդարձակ անտառներդ :

— Անոնք ալ հօրս են :

— Կամ մեծ դղեակդ :

— Այն ալ հօրս է :

— Բայց ուրեմն , ամեն բան հօրդ է ,

ըսաւ վարդապետը աղջիկը յանկարծ ոտք ելնելով :

— Այո՛, մայրս աղքատ էր, մեր բոլոր հարստութիւնը հօբերնուս է, բայց ակույններս, մաղերս, աչքերս եւ ժպիտս որ այնչափ կը սիրես, իմն են :

— Օ՛ն, մտածեց դեռատի աղջիկը, գործը կորսուած է :

— Սակայն, վստահ եղիք, ըսաւ Ավրնան, որ՝ թէեւ տակաւին անմեղ՝ կրցած էր նշմարել իւր տարփուհւոյն յուսահատութիւնը : Ամեն բան կարգադրելու եւ հօրս հաճութիւնն առնելու լաւ միջոց մը գտած եմ :

— Ըսէ նայինք, քու միջոցդ, ըսաւ աղջիկն, որ վայրկեան մը մտածեց թէ՛ կարծածին չափ տխմար չէր երիտասարդը :

— Հիմա երկուքս միատեղ կ'երթանք, ինչպէս որ կը փափաքիս զիրար՝ կը սիրենք եւ ապրուստ գտնելու համար կ'աշխատինք : Օրէնքն երբ որ ներէ, այն ատեն կ'ամուսնանանք, եւ երբ որ վեց եօթը հաս զեղեցիկ պզտիկ Սէն-Լուեր ունենանք, այն ատեն ամենքն ալ կուգան հօրս աղաչել որ խկոյն կը ներէ մեզ՝ մեր քաջած նեղութիւններն իմանալով :

— Այդ է քու միջոցդ : Եւ կը կարծես, պարոն, թէ ես երիտասարդի մը իւր պարտաւորութիւններն ոտնակոխ ընել տամ : Մնաք բարով, ըսաւ, կրնակն Ավրնանի դարձնելով՝ որ ապշած մնաց այս անակընկալ փախուստէն :

« Գեղեցիկ աչքերը գեղեցիկ ոսկինորու տեղ չեն բռներ, ըսաւ վարդապետն դըլխարկով աղջիկը. կոմսը թէեւ ծեր եւ տգեղ է սակայն հարուստ է եւ զիս կը պաշտէ : Ուրեմն, տղուն տեղ հայրը զլիւս կը հանեմ, թէեւ դժուար պիտի ըլլայ, բայց պիտի յաջողիմ » :

Գեռատի աղջիկը քայլերը փութացուց, վստն զի գիշերն արդէն սկսեր էր իւր ըստուերները տարածել երկրիս մրայ. դըլխարկին մէջ միմիայն քանի մը լոյսեր կը տեսնուէին եւ բակին մեծ կաղամախները հովէն զլուխին խոնարհեցնելով կը թռչէին ողորնել տան ապագայ տիրուհին :

Մերունի կոմսն, երբ կարող եղաւ ոտքի վրայ ելնել, խկոյն դռնէն :

« Նախահարցս յիշատակին վրայ կ'երգնում եւ թող զիս բարձր տեղէ մը վար կախեն չարագործի մը պէս եթէ սիրահարեալ չեմ այս փոքրիկ աղջկան եւ եթէ թողում գայն իմ տխմար որդւոյս որ այդպիսի լաւ կտոր մը գնահատելու տարիքը չ'ունի գեւ : Է՛հ, ի՞նչ, ես որ աչերուս մէջ Ուիլիէոյի նայուածքի նմանութիւնն ունիմ եւ Լօքընի քիթը, չը՞ պիտի կրնամ յաղթել փոքրիկ գեղջկուհւոյ մը : Տեսնենք : Յեղափոխութիւնները թէեւ ոչնչացուցին առանձնաշնորհումները, բայց չը կրցան վառթարացնել աղնուականութիւնն : Ի՛նչ որ էին իմ նախնիքս նոյն եմ ես, եւ կ'արժեմ ինչ որ կ'արժէին անոնք : Իմ մեծ հաւս, պարոն Լը Լու, իւր վարդապետը աղջիկը գլխէ հանեց, ես ալ իմն գլխէ պիտի հանեմ, իմ հաւուսնս կարմիր էր իսկ իմն վարդապետն պիտի ըլլայ : Բայց դոյնը առարկան չը վախեր : Բաւ է որ ուղած կերպովս իրեն հետ վարուիմ » :

Եւ կոմսն սկսաւ իւր երիտասարդութեան անցելոյն վրայ ակնարկ մը նետել :

« Իրաւ է որ, ըսաւ, պարկեշտօրէն մըտածելէն վերջ, հին խորամանկութիւններն ամենէն լաւն են, միշտ կը յաջողին, այն միակ իրաւամբ թէ՛ արդէն միշտ յաջողած են : — « Այս գիշեր իմ գեղեակիս վերակացու կնոջ տունը պիտի երթամ, ծերունի կինը սենեակէն դուրս պիտի հանեմ եւ երբ որ պզտիկ աղջիկը գայ, այն ատեն կը տեսնուինք » :

Մինչ ծերունի կոմսն այսպէս կ'ըմայէր իւր Անակրէօնեան գաղափարներուն վրայ, պզտիկ վարդապետը աղջիկը թեթեւ թռչնոյ մը նման գեղեակն եկեր եւ իւր մեծ մօր դրան դուռը կը զարնէր :

Թա՛ք, թա՛ք :

— Ո՞վ է այն :

— Քու պզտիկ աղջիկդ է :

Բարի մեծ մայրն որ քիչ մը տկար ըլլաւն անկողինն էր, պառաց :

— Պարանը քաջ է և դուռը կը բացուի :

Երիտասարդ աղջիկը պարանը քաջեց նւ դուռը բացուեցաւ : Իսկոյն մեծ մօրը քով վաղեց եւ գայն համբոյրներով ծածկեց եւ չը զիտեմ ի՛նչ տեսակ պատմութիւններ ըրաւ անոր, այնպէս որ պառաւ կիներ իս-

կոյն անկողնէն ելաւ, շտապաւ հագուեցաւ եւ պղտիկ աղջկան հետ բակ երթալով՝ խոնաւ և ցուրա յարգարանի մը մէջ պահուեցաւ, իսկ աղջիկն առանց անոր վրայ գլխաւու, եւ առանց ակնածելու անոր տարիքէն, բանալիով վռայէն կը պեց:

« Եթէ մոռցած չեմ պղտիկ վարդագոյն գլխարկով աղջկան պատմութիւնն որ այժմ ես եմ, ըսաւ նա՝ ննջելու սենեակը մըտնելով որ թէ՛ դառնիճ, թէ՛ ճաշարան էր, դայլը պառաւ զիշատել պիտի դայ, բայց գործը կարգադրուած պիտի գտնայ: Արդեօք պիտի զղջայ: »

« Ձե՛մ կարծեր: »

« Այժմ սեղանը շտկենք, ճաշի ատեն լաւ կը խոսակցուին: »

Հազիւ թէ սեղանի մը վրայ ծածկոց մը փռած էր, մէկը դուռը զարկաւ.

Թա՛ք, Թա՛ք:

— Ո՞վ է այն:

— Սէն-Լու կոմսն՝ որ կ'ուզէր խորամանկութեամբ մտնել այն տեղն ուր շատ լաւ կրնար ներկայանալ իւր տէր, պատասխանեց:

— Ձեր թոռն է որ զիս կը զրկէ հոս իւր մօր շինած քաքարն ու այս կարագը ձեզ տալու համար:

Դեռաւոր աղջիկն իւր ձայնը փոխելով՝ պոռաց.

— Պարտնը քաշէ եւ դուռը կը բացուին:

Ծերունի կոմսը պարտնը քաշեց և դուռը բացուեցաւ:

Դեռաւոր աղջիկն անոր բեռնաւորեալ ներս մտնելը տեսածին պէս սկսաւ բարձրաձայն խնդալ:

— Նստեցէք, պարոն կոմս, եւ միասին ընթերցենք, ըսաւ, քանի որ մեծ մայրս գացած է անտառը տեսնել փոքրիկ այծեամբերը թէ՛ արդեօք ցուրտէն չե՞ն տանջուիր:

Կոմսը հրաւէրը կրկնել չը տուաւ եւ նստաւ:

Ընթերցող վերջին տատիճան ուրախ եղաւ:

Դեռաւոր աղջիկն առջի իրիկունը չը գիշտեց զգայլն, սակայն չը թողուց նաեւ

որ նա զինքը գիշատէ:

Ոչ ալ յուսահատեցուցիչ խստութիւն մը բանեցուց, ճիշդ այնչափ տուաւ որչափ հարկ էր տալ կոմսին փափաքներն արթնցընելու համար:

Հետեւեալ առաւօտուն կոմսը դեռաւոր աղջիկը գեղեցիկ տան մը մէջ զետեղեց, զդեակին անմիջապէս մօտ և բոլոր հազար եւ մէկ զիշերներու իշխանուհիի մը նման կ'ապրէր նա:

Յափշտակած էր անտառներ, մարգագետիններ, ագարակներ. սակայն դեռ չէր կրցած կոմսուհւոյ տիտղոսը յափշտակել: Բայց իւր նպատակին կը հասնէր այն յամր եւ հաստատուն ընթացքով՝ որ կրեային ու կնոջ միայն յատուկ է:

Կոմսը նորահաս աղջկան ձեռքը կը համբուրէր, երբեմն մինչեւ արմուկը, բայց երբ աւելի յառաջ երթալու փափաք յայտնէր՝ հողմահարին ծայրովը զայն ետ կը մղէր նա՝ չնորհալի ժպիտով մ'ըսելով.

— Սէն-Լու կոմսուհի ըլլալ կ'ուզեմ:

Օրը հարիւր անգամ մահահրաւէր զանգակի մը պէս կոմսին ականջին կը հնչէին այս միօրինակ բառերը:

« Սէն-Լու կոմսուհի ըլլալ կ'ուզեմ: »

Վերջապէս օր մ'ամէն ժամանակէ աւելի սիրահարեալ կոմսը ծունկի եկաւ եւ գոչեց:

— Լաւ, ութ օրէն Սէն-Լու կոմսուհի պիտի ըլլաս:

Փարէզի ամենէն ճարտար դերձակուհիները կուգային դեղանի օրիորդին հագուստները փորձել որ քիչ ատենէն տիկին պիտի ըլլար:

Ամբողջ գիւղն մեծ ուրախութեան մէջ էր:

Միայն Ալընան ասպետը կը պակսէր այդ հանդէսէն: Խորամանկ աղջիկը մտածելով որ երիտասարդը կրնար արգելք մ'ըլլալ իւր բարձրացման, խնդրեց անոր հօրմէն որ զայն ուրիշ երկիր մը զրկէ, որպէս զի ճամբորդութեամբ անոր միտքն ու սիրտը զարգանայ: Նոյն միջոցին Պաղեստին կը գլուխուէր նա, ուր իւր նախնիք փառքով պըստակուած էին 1160ին ատեններն:

Այս գերերջանիկ ամուսնութեան օրն առտուն կանուխ ապագայ կոմսուհին կազմ եւ պատրաստ էր, սեղմուած, հագուած եւ զարդարուած, ամէն տեղ կը մօնէր կ'ելլէր, բաղաբազման եւ երէցը դղեակը կանչել տուած էր:

Կէս օրին եկան եւ իրեն իմաց տուին թէ՛ ամէն ոք պատրաստ է, եւ թէ՛ միայն փեսայն երեւան չը կար: Խեղճ հարսն անոր սենեակը կը վազէ, դուռը կը զարնէ եւ պատասխան չ'առնէր: Ճարը հատած ներս կը մտնէ... ոչինչ: — Կ'սկսի կանչել... դարձեալ ոչինչ — Այն ատեն սրտայուզութեամբ դէպի անկողին կը վազէ եւ աճապարանօք վարագոյրները կը քաշէ... Ի՞նչ տեսարան: — Մերունի կոմսը գիշերը մեռեր է:

— Օ՛հ, ըսաւ, առանց դժկամակելու, չը յուսահատինք, այժմ պէտք է փոքրիկ ասպետը ձեռք անցունեմ: Եւ առանց մեռեալին սենեկէն դուրս ելնելու հետեւեալ նամակն սկսաւ գրել.

« Սիրելիք իմ Ավրան ».

« Եկէք, ձեր սիրելի հայրը մեռաւ եւ « ձեր փոքրիկ սիրուհին որ զձեզ միշտ կը « սիրէ, այս վարկեանէս պատրաստ է ձեզ « հետ ամուսնանալ: »

Ավրան անմիջապէս վերադարձաւ, փայլուն մեծ պեխեր ունէր, մեկնած ժամանակէն աւելի ուժեղ էր, բայց տակաւին տասն եւ վեց տարեկան աղջկան մը կարողութիւնը չ'ունէր:

— Բարեկամք իմ, ըսաւ անոր իւր հօրը նշանածն՝ անոր թեւերուն մէջ նետուելով ո՛րքան արտասուք թափեցի ձեր վրայ, բայց վերջապէս եկաք եւ ես ամէն բան մոռցայ:

— Ա՛հ, փոքրիկ վարդադեղ աղջիկ, որքան ձայնդ քաղցր է:

— Քեզ աւելի աղէկ հրապուրելու համար, սիրուն Ավրան:

— Որքան մեծ են աչերդ:

— Քեզ աղէկ տեսնելու համար, սիրուն Ավրան:

— Որքան գեղեցիկ են թեւերդ:

— Քեզ աղէկ գրկելու համար, սիրուն Ավրան:

— Որքան աղւոր եւ ձերմակ են ակոսյներդ:

— Քեզ աղէկ գիշատելու համար, սիրուն Ավրան:

Եւ այնքան լաւ գիշատեց զնա՝ որ վերջապէս Աէն-Լու կոմսուհի եղաւ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Թերեւս այս պատմութիւն տարօրինակ թուի ձեզ, ընթերցողք, այլ, այժմ շատ հեռի են այն ժամանակներն՝ ուր այրերն էին աղջիկներն հրապուրողը. յառաջադիմութիւնն ամէն բանի մէջ մեծ փոփոխութիւններ մտցուցած է. այնպէս որ, այս լուսաւորութեան դարուս մէջ աղջիկներն են որ կը հրապուրեն եւ գլխէ կը հանեն զմարդիկ:

(ՇԱՌԼ - ՆԱՌԷՅ)

S. ՉՕՊԱՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՃԱՄԲՐՈՒՄԻՆԵՐԵՔ ՃԱՆՃԵՐՈՒ

Մ. Մարտիմ տիւ Քան, Յրանալան Ակադեմիոյ նշանաւոր ուղեւոր, հետեւեալ սիրուն եւ հանձարեղ բանագոյնաբեր գրած է, զոր թարգմանելով մեզ դրկած է մեր Վիեննայի արգոյ թղթակիցը:

Ճանճ մը երեք զաւակ ունէր. բնաւին այրի չէր բայց իւր էրիկը յանդուգն ճամբորդութեան մը ձեռնարկած էր ու ետ դարձած չէր. իւր էրկան զինք լքանելը թէ եւ իրեն մեծ ցաւ պատճառած էր բայց եւ այնպէս իւր պատիւը պահպանելով իւր զաւակաց լաւ կրթութիւն տալէ ետ մնացած չէր, որոց անդրանիկը մանչ էր եւ Միւսքարիլլօ կ'անուանէր. իսկ միւսները երկու աղջիկ էին Միւսգապէլ եւ Միւսգապին անուամբ:

Երբ իւր զաւակներն ամեն բան սովորեցան եւ ինչպէս որ պէտք է լաւ դաստիարակութիւն ունեցան, որ մը զանոնք իւր բովը կանչեց եւ քաղցրութեամբ եւ գոբովանօք անոնց երեսը նայելով իրենց ըսաւ.

« Ժամը հասաւ. ձեր կրթութիւնը կատարեալագործելու : Երատարգութիւնն ամենամեծ պէտք ունի ճամբորդութիւններ ընելու, որոնք խելքը կ'ընդարձակեն եւ ամեն բան կը սորվեցնեն : Նա եւ սիրտ կուտան իրենց ցոյց տալով ամեն թշուառութիւններն որոնց ենթակայ է ճանձերու սեււոյն այս երկրիս վրայ : »

« Գացէք ուրեմն իմ զաւակներս, այս փորձութիւնները գացէք սորվեցէք : Բայց ձեզմէ զատուելէս առաջ նաեւ իմ թաթերս ձեր խոնարհեալ ճակատներուն վրայ դնելէս առաջ որով իմ օրհնութիւնս ձեզ տամ, ականջ դրէք ձեր մօրը ձայնին որ զձեզ այնքան շատ կը սիրէ եւ լաւ դաստիարակութիւն տալու համար անթիւ զոհողութիւններ ըրաւ եւ կ'ուզէ զձեզ ամեն վրտանգներէ ազատ պահել : Բոլոր աշխարհք ճանձերունն է որոնց համար այս աշխարհս ստեղծուած է : »

« Ամեն տեղ առատ ուտելիք կը գտնուի զոր բնութիւնը ճանձերու համար պատրաստած է : Պտուղները, ցորեններն, անասունները ձերն են : Մի՛ վախճաք ասոնցմէ ուտել զորս ստեղծողն առատութեամբ շնորհած է : Բայց մարդը կատարի վայրենի կենդանի մ'է, անիրաւ, անօրէն, անգութ եւ առանց առաքինութեան : Մարդը « Ես արարածներուն թագաւորն եմ » կ'ըսէ, բայց միշտ զանոնք կործանելու կ'աշխատի : Ինչ որ իր ձեռքն անցնի խարդախեալ եւ պղծեալ է : Մարդս խաբէութեամբ լեցուն է, նաեւ իւր խօսքերն եւ գործերը : Զմեզ կ'ատէ կ'արհամարհէ, ո՛վ սիրելի զաւակներս, հեռու կեցէք մարդերէ, փախեցէք անոնցմէ, երգում ըրէք, երգում ըրէք ձեր մօրը որ իւր հրամանին պիտի հնազանդիք : »

Երեք ճանձերն իրենց հեծկլտանքը բռնելով թաթերնին վեր վերուցին եւ բարձր ձայնով պոռացին. « Երգում կ'ընենք : »

« Երթա՛ք բարեաւ, զա՛ւակներս, ձեզմէ այս կը սպասէի : — Միւսը արիւծ, բոյրերդ ընդ կը յանձնեմ, դուն անոնցմէ բանի մը մանրերկրորդ առաջ ծնած ես, հետեւաբար անդրանիկն ես, ուստի անոնց պաշտպանը պիտի ըլլաս : Են միշտ քու թեւերուդ զօրութեանը, թաթերուդ յաջողակութեանն

եւ խելացիութեանդ ու նրամատութեանդ վրայ սքանչացայ, ուստի այս բարձր հանգամանքներովդ քու բոյրերուդ վրայ հսկէ, զանոնք պաշտպանէ եւ անոնց հասիր օգնէ ամեն անգամ որ նեղութեան մէջ են : Ափսո՛ս, անոնք դեռ փորձառութիւն չ'ունին : Զանոնք իբր սուրբ աւանդ ունեցիր, ընդմէ կը սպասեմ որ անոնց առողջութեանն եւ բարօրութեանը վրայ պիտի հսկես : Այս գիշեր նորէն իրարու քով քնանանք : Վաղն առտու երբ արեւը պիտի ծագէ, ճամբայ պիտի ելլէք : Զեր պանդխտութեանը մէջ չը պիտի մոռնաք երբեք ձեր խեղճ մայրըն որ զձեզ իւր մոքէն երբեք չը պիտի հանէ : »

Հետեւեալ օրը մայրերնին դիւերն օրհնեց երկար ժամանակ զանոնք գրկեց/սառն համբուրեց եւ զանոնք միշտ դիտեց մինչեւ որ հեռանալով աներեւոյթ եղան :

